ՍՏԵՓԱՆՆՈՍ ՊԱԼԱՍԱՆԵԱՆ

Կիրակի փետրուարի 19-ին ժամը 6-ին կէսօրից յետոյ վախճանուեց Մայր Աթոռոյ ճեմարանի ուսուցիչ և յայտնի մատենագիր Ստեփանոս Պալասանեան։ Հանգուցեալը ծնուել էր Ռումանիայի Բօգուշան քաղաքում և իր ուսումը ստացել էր Փարիզի Մուրատեան վարժարանում։ Գնալով Ռուսաստան 1858 թուականին դեռ 18 կամ 19 ամեայ երիտասարդ՝ Պալասանեանը ուսուցչութեան պաշտօն ստանձնեց նորաբաց Խալիբեան ուսումնարանում։ Մի քանի տարուց յետոյ Թէոդոսիայից նա տեղափոխուեց Նոր-Նախիջևան, որտեղ վարումէր նոյն պաշտօնը։ Վերջապէս գալով Անդրկովկաս՝ հանգուցեալը նորից նուիրեց իր անձը հայ մանուկների կրթութեան գործին՝ սկզբում Թիֆլիզում՝ Ներսիսեան և Գայիանեան դպրոցներում, իսկ վերջերս Վաղարշապատում՝ Գէորգեան ճեմարանում։

Ամսիս 20-ին ժամը 4½-ին հանգուցեալի մարմինը բերուեցաւ իր բնակարանից Ս. Գայիանէի վանքը՝ հանգուցեալի սգաւոր այրիի, դստեր, բազմաթիւ հոգևորականութեան, ճեմարանի տեսչի, ուսուցչական խմբի և խուռն բազմութեան ուղեկցութեամբ։ Ճանապարհը՝ որով բերումէին հանգուցեալի մարմինը՝ անցնումէր ճեմարանի բակով։ Այդտեղ կանգ առաւ հանդիսաւոր գնացքը և հանգուցեալի նախկին աշակերտ՝ այժմ ճեմարանի վերա-

կացու՝ Կ. Տէր-Մկրտչեանը մի քանի սրտաբուղխ խօսքեր ուղղեց դէպի սիրելի վարժապետի դիակը։ Հետևեալ օրը՝ ամսիս 21-ին առաւօտեան 11 ժամին հանգուցեալի մարմինը նոյնպիսի հանդիսով յանձնուեցաւ հողին Ս. Գայիանէի վանքի բակի հիւսիս — արևելեան կողմում։ Դագաղի վրայ՝ տաճարում մի պատշաճաւոր ճառ արտասանեց Սինօդի անդամ Գեր. Սարգիս Արքաղանը, իսկ գերեզմանի վրայ՝ Ճեմարանի կողմից՝ պատկառելի ուսուցիչ պ. Մ. Պալեանը։ Սրտաշարժ էր տեսնել ինչպէս հանգուցեալի աշակերտներից մի քանիսը իրանց ձեռքով ի պատիւ վարժապետի գրած դամբանական ճառերը թաղեցին նրա գերեզմանում։ Հանգուցեալի վրայ դրուեցան մի քանի պսակներ՝ որոնցից աչքի էին ընկնում մանաւանդ երկուսը հետևեալ մակագրութիւններով. «Ճեմարանը իւր երախտաւոր մշակին՝ Ստեփանոս Պալասանեանին» և «Գ. Ճ. ուսանողները իրանց սիրելի վարժապետին»։

Պալասանեանը մեռաւ մի այնպիսի հասակում, որի մէջ շատերը դեռ նոր են երևան հանում իրանց մտքի կամ երևակայութեան լաւագոյն արտադրութիւնները. հանգուցեալի յիսուն տարին դեռ լրացած չէր։ Չը նայած այդ ոչ երկարատև կեանքին, Պալասանեանը բաւական արդիւնք տուաւ թէ ուսուցչական և թէ գրականական փշալի ասպարէզներում։ Հայ մանկավարժական աշխարհում հանգուցեալը յայտնի էր որպէս հմուտ, փորձառու և բարեխիղճ ուսուցիչ, որ իր դասատուութեան ասպարէզում, — Խորենացու լեզուով խօսելով — «ոչ որպէս արուեստ ուսուցանէր, այլ իբրև զհոգի առաքելաբար աշակերտելոցն տայր»։ Վկայ են խօսքերիս հանգուցեալի բազմաթիւ նախկին և այժմեան աշակերտները։ Իր պաշտօնակիցների շրջանում Պալասանեանը յարգուած էր որպէս բարեսիրտ, ներողամիտ և լուռ անձնաւորութիւն։ Բայց յիշատակութեան արժանի է մանաւանդ հանգուցեալի համեստութիւնը (մի բարեմասնութիւն՝ որ

պակաս է մեր այժմեան համարեա բոլոր հասարակական և գրականական գործիչներին)։ Այդ է պատճառը որ Պալասանեանի գործունէութեան քսանհինգամեակը և երեսնամեակը աննկատելի անցան հասարակութեան համար և տօնուեցան միայն նեղ ընտանեկան շրջանում։ Գալով հանգուցեալի գրականական գործունէութեանը, պէտք է ասել որ այդ ասպարիզում նա բաւական նպաստեց հայ աղքատիկ գրականութեան և աշխարհիկ լեզուի զարգացմանը։ Որպէս ընիկ Ռումանիայի հայ և աշակերտ Մուրատեան վարժարանի Պալասանեանը մանուկ հասակից ընտելացել էր արևմտեան հայոց բարբառին, բայց Անդրկովկասում նա կարճ միջոցում ծանօթացաւ և մեր գրականական լեզուին։ Հանգուցեալը պատմում էր՝ որ ռուսահայոց բարբառի համն ու հոտը նա առաւ առաջին անգամ անմահ Աբովեանի «Վէրք Հայաստանի»ն կարդալով։ Այդ օրից ահա Պալասանեանը սկսեց ոչ միայն գործ ածել մեր գրականական լեզուն, այլ և մշակել և կատարելագործել։ Պալասանեանը առաջինը եղաւ որ տուաւ մեզ մեր բարբառի քերականութիւնը՝ մի գործ որ իր տեսակում կատարելագոյնն է մեր գրականութեան մէջ։ Ոչ նուազ արժանաւորութիւն ունի և նրա աշխատասիրած գրաբարի քերականութիւնը, բաղկացած երկու մասից։ Հայոց գրականութեան պատմութեան համար նշանաւոր է հանգուցեալի «Բանաւոր գրականութիւն» աշխատութիւնը՝ որ չէ հնացել մինչև այսօր՝ իր լոյս տեսնելուց տասնեակ տարիներ յետոյ։ Բացի առանձին գրքով հրատարակուած այս երկասիրութիւններից, Պալասանեանը ունի բազմաթիւ ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ մեր պարբերական հրատարակութիւնների մէջ։ Վաթսնական թուականներին նա աշխատակցում էր «Կռունկ» ամսագրին, որի մէջ հանգուցեալի թարգմանութեամբ տպագրուեցաւ ֆրանսիացի հայագէտ Վիկտոր Լանգլուայի մի հետազօտութիւնը Մովսէս Խորենացու պատմութեան աղբիւրների մասին։ Եօթա-

նամնական թուականներին Պալասանեանը հրատարակում էր իր գրուածքները «Մեղուում» և «Փորձում»։ Մանաւանդ շատ մանր ու խոշոր յօդուածներ ունի ցրուած հանգուցեալը վերոյիշեալ հանդէսի մէջ։ Յիշենք «Եւրոպացւոց վաճառականութիւնը Կիլիկիայի հետ», «Մի հայեացք Հայոց նախնական պատմութեան վրայ», «Հինգերորդ դարու հայոց մտաւոր շարժումը», «Գիտութիւն և կրօն», «Բնաւորութիւնների ժառանգականութիւնը» և այլն։ «Փորձ»ի մէջ հրատարակուած են և մի շարք նշանաւոր քննադատական և մատենագիտական յօդուածներ, որոնցով նա կրիտիկայի ճաշակ էր տալիս ընթերցող հասարակութեանը։ «Փորձ»ի դադարելուց յետոյ հանգուցեալը շատ սակաւ էր հանդէս գալիս իր նոր աշխատութիւններով։ Միայն երբեմն երբեմն լոյս էին տեսնում նրա յօդուածները «Վարժարան» և վերջերս «Արարատ» ամսագիրներում։ Հանգուցեալը թողել է և մի ձեռագիր «Հայոց պատմութիւն» և անաւարտ ռուսերէնից-հայերէն բառարան։

Այս են ահա հանգուցեալի գրականական գործունէութեան արդիւնքները։ Ում համար թանգ են մեր ազգի լուսաւորութեան և յառաջադիմութեան շահերը, նա չէ կարող մեզ հետ միասին չըցաւել այդպիսի տարաժամ կորստի պատճառուին, և չը միացնել իր ձայնը մերի հետ՝ ասելով. հանգիստ ոսկրներիդ, ազնիւ մշակ և առաքինի հայ մարդ։

Ե. Մ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.